**Հավելված 6**
**«ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/16»* ծածկագրով**
գնանշման հարցման **հրավերի**

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/16-1

ք. Սևան «23» մարտի 2020 թ.

ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ն ի դեմս տնօրեն Դավիթ Կարապետյանի, որը գործում է ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ասատուր Ասատրյանի, որը գործում է <<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 215072,3 /երկու հարյուր տասնհինգ հազար յոթանասուներկու դրամ երեսուն լումա/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[17] Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և

պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս

---

[20] [illegible]

պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ԱՆ Սևանի հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ | <<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ |
| ք. Սևան, Կարմիր բանակի 68 | Ք. Երևան Տիչինա 3-րդ նրբ. 2/2 |
| 0261-2-41-73 | ԱմերիաԲանկ ՓԲԸ |
| ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ ՓԲԸ "Սևան" | Հ/Հ 1570005065330100 |
| մասնաճյուղ | ՀՎՀՀ 01222567 |
| 16034026004300 | Ասատուր Ասատրյան |
| 08601459 | |
| Դավիթ Կարապետյան | |
| _____ | _____ |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 1
« 23 » մարտի 2020 թ. կնքված
ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/16-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը ** | տեխնիկական բնութագիրը**** | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| 33611120 | Ֆամոտիդին | | 20մգ; դեղահատեր թաղանթապատ, բլիստերում | հատ | 13.64 | 2728 | 200 | Ք. Սևան Կարմիր բանակի 68 | 200 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև 25.12.2020թ-ը |
| 33611160 | Մետոկլոպրամիդ (մետոկլոպրամիդի հիդրոքլորիդ) | | 5մգ/մլ; լուծույթ ներարկման, ամպուլներ 2մլ բլիստերում | հատ | 53.84 | 1615.2 | 30 | Ք. Սևան Կարմիր բանակի 68 | 30 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև 25.12.2020թ-ը |
| 33611170 | Դրոտավերին (դրոտավերինի հիդրոքլորիդ) | | 40մգ; դեղահատեր, բլիստերում | հատ | 8.92 | 892 | 100 | Ք. Սևան Կարմիր բանակի 68 | 100 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև 25.12.2020թ-ը |
| 33611200 | Լոպերամիդ (լոպերամիդի հիդրոքլորիդ) | | 2մգ; դեղապատիճներ, բլիստերում | հատ | 8.8 | 2200 | 250 | Ք. Սևան Կարմիր բանակի 68 | 250 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև 25.12.2020թ-ը |
| 33611240 | Աձուխ ակտիվացված | | դեղահատեր 250մգ; ստրիպում | հատ | 2.16 | 432 | 200 | Ք. Սևան Կարմիր բանակի 68 | 200 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև 25.12.2020թ-ը |
| 33611250 | Գլիբենկլամիդ | | 5մգ;դեղահատեր թաղանթապատ, բլիստերում և պլաստիկե տարայում | հատ | 8.61 | 12915 | 1500 | Ք. Սևան Կարմիր բանակի 68 | 1500 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև 25.12.2020թ-ը |
| 33611341 | Վիտամին B1, վիտամին B2, | | 5մգ/մլ+2մգ/մլ+2մգ/մլ+3մգ/մլ+20մգ/մլ; լուծույթ | հատ | 155.31 | 31062 | 200 | Ք. Սևան Կարմիր բանակի | 200 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | վիտամին B6, դեքսպանթենոլ, նիկոտինամիդ | | ներարկման, ամպուլներ 2մլ, բլիստերում | | | | | 68 | | 25.12.2020թ-ը |
| 33621340 | Կոֆեին (կոֆեին-բենզոատ նատրիում) | | լուծույթ ներարկման 100մգ/մլ; ամպուլներ 1մլ | հատ | 32.7 | 1635 | 50 | Ք. Սևան Կարմիր բանակի 68 | 50 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև 25.12.2020թ-ը |
| 33621620 | Սպիրոնոլակտոն | | դեղահատեր 25մգ; բլիստերում | հատ | 35.5 | 14200 | 400 | Ք. Սևան Կարմիր բանակի 68 | 400 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև 25.12.2020թ-ը |
| 33621710 | Ատենոլոլ | | 50մգ; դեղահատեր, բլիստերում | հատ | 4.05 | 2835 | 700 | Ք. Սևան Կարմիր բանակի 68 | 700 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև 25.12.2020թ-ը |
| 33631310 | Դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում) | | 50մգ; մոմիկներ ուղիղաղիքային | հատ | 98.18 | 1963,6 | 20 | Ք. Սևան Կարմիր բանակի 68 | 20 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև 25.12.2020թ-ը |
| 33651131 | Սուլֆամեթոքսազոլ, տրիմեթոպրիմ | | 400մգ+80մգ; դեղահատեր, բլիստերում | հատ | 11.74 | 5870 | 500 | Ք. Սևան Կարմիր բանակի 68 | 500 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև 25.12.2020թ-ը |
| 33651134 | Ցիպրոֆլոքսացին (ցիպրոֆլոքսացինի հիդրոքլորիդ), դեքսամեթազոն | | 3մգ/մլ+1մգ/մլ; դեղակախույթ աչքի/ականջի, 10մլ պլաստիկե սրվակ-կաթոցիկ | հատ | 392 | 1960 | 5 | Ք. Սևան Կարմիր բանակի 68 | 5 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև 25.12.2020թ-ը |
| 33651135 | Քլորամֆենիկոլ | | դեղահատեր 500մգ; բլիստերում | հատ | 43.89 | 10972.5 | 250 | Ք. Սևան Կարմիր բանակի 68 | 250 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև 25.12.2020թ-ը |
| 33651144 | Նիտրոքսոլին | | 50մգ;դեղահատեր թաղանթապատ, բլիստերում | հատ | 6.24 | 3120 | 500 | Ք. Սևան Կարմիր բանակի 68 | 500 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև 25.12.2020թ-ը |
| 33651148 | Կլոտրիմազոլ | | 10մգ/գ; 20գ ալյումինե պարկուճ | հատ | 210.4 | 2104 | 10 | Ք. Սևան Կարմիր բանակի 68 | 10 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև 25.12.2020թ-ը |
| 33651149 | Նիստատին | | 500000ՄՄ; դեղահատեր | հատ | 14 | 1400 | 100 | Ք. Սևան Կարմիր | 100 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | թաղանթապատ, բլիստերում | | | | | բանակի 68 | | մինչև 25.12.2020թ-ը |
| 33661136 | Դիազեպամ | | 10մգ/2մլ; լուծույթ ներարկման, ամպուլներ 2մլ | հատ | 66.8 | 100200 | 1500 | Ք. Սևան Կարմիր բանակի 68 | 1500 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև 25.12.2020թ-ը |
| 33671114 | Ամինոֆիլին | | 150մգ;դեղահատեր, բլիստերում | հատ | 4.43 | 443 | 100 | Ք. Սևան Կարմիր բանակի 68 | 100 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև 25.12.2020թ-ը |
| 33671130 | Դիֆենհիդրամին (դիֆենհիդրամին ի հիդրոքլորիդ) | | 10մգ/մլ; լուծույթ ներարկման, ամպուլներ 1մլ | հատ | 22.89 | 2289 | 100 | Ք. Սևան Կարմիր բանակի 68 | 100 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև 25.12.2020թ-ը |
| 33691176 | Ֆենազոն, լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ) | | 40մգ/գ+10մգ/գ; ականջակաթիլներ,15մլ(16 գ) ապակե սրվակ և կաթոցիկ | հատ | 1120 | 4480 | 4 | Ք. Սևան Կարմիր բանակի 68 | 4 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև 25.12.2020թ-ը |
| 33691176 | Քլորոբութանոլ (քլորոբութանոլի հիդրատ), քափուր, L-մենթոլ, նիվենու յուղ | | 6,67մգ/գ+6,67մգ/գ+6,67մգ/գ+6,67մգ/գ; ցողացիր տեղային կիրառման, 30գ ալյումինե տարա, 45գ ալյումինե տարա | հատ | 468 | 4680 | 10 | Ք. Սևան Կարմիր բանակի 68 | 10 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև 25.12.2020թ-ը |
| 33691176 | Դոքսիցիկլին (դոքսիցիկլինի հիկլատ) | | 100մգ; դեղապատիճներ, բլիստերում | հատ | 13.83 | 1383 | 100 | Ք. Սևան Կարմիր բանակի 68 | 100 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև 25.12.2020թ-ը |
| 33691176 | Տուղտ դեղատու | | դեղահատեր 50մգ; ստրիպում | հատ | 11.17 | 1117 | 100 | Ք. Սևան Կարմիր բանակի 68 | 100 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև 25.12.2020թ-ը |
| 33691200 | Սենոզիդներ A,B | | 70մգ; դեղահատեր, բլիստերում | հատ | 12.88 | 2576 | 200 | Ք. Սևան Կարմիր բանակի 68 | 200 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև 25.12.2020թ-ը |

*ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի սրկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-*

*ı հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:*

*ıկարարման կոնկրետ օրը և քանակը որոշվում է Գնորդի կողմից նախնական (ոչ շուտ քան 3 աշխատանքային օր առաջ) պատվերի միջոցով՝ էլ. փոստով կամ հեռախոսազանգով:*

*ղերի տեղափոխումը, պահեստավորումը և պահպանումը պետք է իրականացվի համաձայն ՀՀ ԱՆ նախարարի 2010թ. 17-Ն հրամանի:*

ողի պիտանիության ժամկետները գնորդին հանձնման պահին պետք է լինեն հետևյալը՝

տարվանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ,

չև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը,

անձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, դեղի սպառման համար սահմանված ությունի կարճ ժամկետները, դեղը հանձնման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱՆ Սևանի հոգեկան առողջության
կենտրոն ՓԲԸ
ք. Սևան, Կարմիր բանակի 68
0261-2-41-73
ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ ՓԲԸ "Սևան"
մասնաճյուղ
16034026004300
08601459
Դավիթ Կարապետյան

_____

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

<<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ
Ք. Երևան Տիչինա 3-րդ նրբ. 2/2
ԱմերիաԲանկ ՓԲԸ
Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567

Ասատուր Ասատրյան

_____

/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 2*
« 23 » մարտի 2020 թ. կնքված
ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/16-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ավերով ատեսվա ծ աբաժնի ամարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 2 | 33611120 | Ֆամոտիդին | | | | 2728 | 2728 | 2728 | 2728 | 2728 | 2728 | 2728 | 2728 | 2728 | 2728 |
| 4 | 33611160 | Մետոկլոպրամիդ (մետոկլոպրամիդի հիդրոքլորիդ) | | | | 1615.2 | 1615.2 | 1615.2 | 1615.2 | 1615.2 | 1615.2 | 1615.2 | 1615.2 | 1615.2 | 1615.2 |
| 6 | 33611170 | Դրոտավերին (դրոտավերինի հիդրոքլորիդ) | | | | 892 | 892 | 892 | 892 | 892 | 892 | 892 | 892 | 892 | 892 |
| 7 | 33611200 | Լոպերամիդ (լոպերամիդի հիդրոքլորիդ) | | | | 2200 | 2200 | 2200 | 2200 | 2200 | 2200 | 2200 | 2200 | 2200 | 2200 |
| 8 | 33611240 | Աձուխ ակտիվացված | | | | 432 | 432 | 432 | 432 | 432 | 432 | 432 | 432 | 432 | 432 |
| 9 | 33611250 | Գլիբենկլամիդ | | | | 12915 | 12915 | 12915 | 12915 | 12915 | 12915 | 12915 | 12915 | 12915 | 12915 |
| 10 | 33611341 | Վիտամին B1, վիտամին B2, վիտամին B6, | | | | 31062 | 31062 | 31062 | 31062 | 31062 | 31062 | 31062 | 31062 | 31062 | 31062 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | դեքսպանթենոլ, նիկոտինամիդ | | | | | | | | | | | | | |
| 14 | 33621340 | Կոֆեին (կոֆեին-բենզոատ նատրիում) | | | | 1635 | 1635 | 1635 | 1635 | 1635 | 1635 | 1635 | 1635 | 1635 | 1635 |
| 17 | 33621620 | Սպիրոնոլակտոն | | | | 14200 | 14200 | 14200 | 14200 | 14200 | 14200 | 14200 | 14200 | 14200 | 14200 |
| 18 | 33621710 | Ատենոլոլ | | | | 2835 | 2835 | 2835 | 2835 | 2835 | 2835 | 2835 | 2835 | 2835 | 2835 |
| 25 | 33631310 | Դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում) | | | | 1963,6 | 1963,6 | 1963,6 | 1963,6 | 1963,6 | 1963,6 | 1963,6 | 1963,6 | 1963,6 | 1963,6 |
| 32 | 33651131 | Սուլֆամեթոքսազոլ, տրիմեթոպրիմ | | | | 5870 | 5870 | 5870 | 5870 | 5870 | 5870 | 5870 | 5870 | 5870 | 5870 |
| 33 | 33651134 | Ցիպրոֆլոքսացին (ցիպրոֆլոքսացինի հիդրոքլորիդ), դեքսամեթազոն | | | | 1960 | 1960 | 1960 | 1960 | 1960 | 1960 | 1960 | 1960 | 1960 | 1960 |
| 34 | 33651135 | Քլորամֆենիկոլ | | | | 10972.5 | 10972.5 | 10972.5 | 10972.5 | 10972.5 | 10972.5 | 10972.5 | 10972.5 | 10972.5 | 10972.5 |
| 35 | 33651144 | Նիտրոքսոլին | | | | 3120 | 3120 | 3120 | 3120 | 3120 | 3120 | 3120 | 3120 | 3120 | 3120 |
| 36 | 33651148 | Կլոտրիմազոլ | | | | 2104 | 2104 | 2104 | 2104 | 2104 | 2104 | 2104 | 2104 | 2104 | 2104 |
| 37 | 33651149 | Նիստատին | | | | 1400 | 1400 | 1400 | 1400 | 1400 | 1400 | 1400 | 1400 | 1400 | 1400 |
| 44 | 33661136 | Դիազեպամ | | | | 50100 | 100200 | 100200 | 100200 | 100200 | 100200 | 100200 | 100200 | 100200 | 100200 |
| 47 | 33671114 | Ամինոֆիլին | | | | 443 | 443 | 443 | 443 | 443 | 443 | 443 | 443 | 443 | 443 |
| 50 | 33671130 | Դիֆենհիդրամին (դիֆենհիդրամինի հիդրոքլորիդ) | | | | 2289 | 2289 | 2289 | 2289 | 2289 | 2289 | 2289 | 2289 | 2289 | 2289 |
| 57 | 33691176 | Ֆենազոն, լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ) | | | | 4480 | 4480 | 4480 | 4480 | 4480 | 4480 | 4480 | 4480 | 4480 | 4480 |
| 58 | 33691176 | Քլորոբութանոլ | | | | 4680 | 4680 | 4680 | 4680 | 4680 | 4680 | 4680 | 4680 | 4680 | 4680 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | (քլորոբութանոլի հիդրատ), քափուր, L-մենթոլ, նիվենու յուղ | | | | | | | | | | | | | |
| 61 | 33691176 | Դոքսիցիկլին (դոքսիցիկլինի հիկլատ) | | | | 1383 | 1383 | 1383 | 1383 | 1383 | 1383 | 1383 | 1383 | 1383 | 1383 |
| 63 | 33691176 | Տուղտ դեղատու | | | | 1117 | 1117 | 1117 | 1117 | 1117 | 1117 | 1117 | 1117 | 1117 | 1117 |
| 69 | 33691200 | Սենոզիդներ A,B | | | | 2576 | 2576 | 2576 | 2576 | 2576 | 2576 | 2576 | 2576 | 2576 | 2576 |

*ման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*
*ներում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱՆ Սևանի հոգեկան առողջության
կենտրոն ՓԲԸ
ք. Սևան, Կարմիր բանակի 68
0261-2-41-73
ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ ՓԲԸ "Սևան"
մասնաճյուղ
16034026004300
08601459
Դավիթ Կարապետյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

<<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ
Ք. Երևան Տիչինա 3-րդ նրբ. 2/2
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567

Ասատուր Ասատրյան

/ստորագրություն/
Կ.Տ